# ՑՈՒՑԱԿ
# ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կալվածագրի վերևի աջ ծայրամասում կա հետևյալ հայերեն նոտրգիր գրությունը)

Վկայ եմ

Սրբոյ Էջմիածնի բնիկ միաբան և սրբազան Առաքելոյն Թադէոսի վանուց և վիճակաց նորա Առաջնորդ և այժմ նորոգ կարգեալ վերատեսուչ համայն հոգևորական գործոցն վերաքննակեալ Ատրպատականի և բնակչութիւնք հայոց որք ի գաւառսն Նախիջևանու և Ագուլիսայ և Տարալակեազու. և չորից վանօրէիցն Սրբոյ Կարապետու, Սրբոյ Նախավկայի, Սրբոյ Թովմայի և Կարմիր Վանուցն Աստապատու. Բարսեղ Արքեպիսկոպոս Խաչատուրեան Կեսարացոյ, վաստակաւոր և Բ կատարեցաւ զայս, ի նշանս իշխանութեան ռուսաց կայսեր Նիկոլայ Պավլովիչի. զկնի երից ամաց առմն. դըրունս և Նախիջևանայ ի ձեռաց պարսից ազգին։

(Այստեղ կա խաչաձև 2,6×2,6 սմ. չափերով մի կնիք, որի վրա գրված է)

Ք. Ծ.

Բարսեղ Էջմի. Վարդապետ

1810։

(Աջակողմյան լուսանցքում և վերևում կան պարսիկների օվալաձև և քառանկյուն 33 զանազան փոքրիկ կնիքներ և ստորագրություններ, իսկ ձախակողմյան լուսանցքում և վերևում կան հայերի օվալաձև և քառանկյուն 19 զանազան փոքրիկ կընիքներ և ստորագրություններ, որոնց անունները տրվում են ստորև)։

Մէլիք Էվազ տիվանբէկի.
Մէլիք Մարտիրոս.
Միքայէլ.
Կարապէտ Բունեաթով վ(կ)այէմ.
Ես Նախչևան քաղաքի ավագ քհանայ տէր Կարապետս վկ(այե)մ.
Դիվանպակի Մէլիք Մաթոս Սումպաթով.
Սարքիսն Սահակեան վկ(ա)յեմ.
Ես Մելիք Յարութիւնս Մելիք Ստեփանոսս Ջուղայեցի վըգյեմ.
Մէլիք Մարտիրոս Ենկիպարեն Նախջվցի.
Կարայպետ Ավաքեն Մայիլով Մահլզցի, որ այժըմ Նախջվն.
Սրայբիոն Պետրոսեն Նախչվցի.
Մէլիք Էհվազ Օհանէսեն Նախջվցի.
Սուքեաս Բաղտասարեան Ջուղայեցի, որ աժմ ի Նախջվան քաղաքի.
Մէլիք Ջօրհապ Մէլիքօվ Թազայ գեղի.
Սարգսի Մկրտիչօվ Աստայպատցի.
Կարայպետ Աշխաթեն երեսփխան Նախջվցի.
Պօղոս Աթամեան Նախիչվանցի.
Մելիք Իսահակ Այլայպատցի.

Ես Սուրբ Նախվկայի վանուց Առաջնոր(դ) Սարգիս վարդապետս այս ղաբալայի եղեալ Ծամբայ մուլքին վերոյ գրեալ հայի և թ(ու)րքի վկայութեամբն և ես ևս վկայեմ որ Պրն. Ղազարն Սարգիսեանն մօհբալուցն առաւ (կնիք)։

(Կալվածագրի կռնակում հետևյալ հայերեն երկու գրությունները կան)

Ես Մկրտիչ Սարքսեան Սահակեանս վկայեմ որ Ղազար Սարքսեանըն Ծամբայ գիւղի կէսն իւր ղաբալօվն ծախեց Սրբոյ Նախավկայի վանուց առաջնորդ Սարգիս աստուածարեալ վարդապետի 1830-ին սեպտեմբերի 4-ին ի Նախիջևան քաղաք։

Ես Նախիջևանցի Պետրոս Քասպարեանս այս ղաբալիւ վկայեմ, որ ծախվեցաւ Սրբոյ Նախավկայի վանուց առաջնորդ Սարգիս աստուածարեալ վարդապետի։

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի №№ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի №№ Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի №№ Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի №№ Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի №№ Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի №№ Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի №№ Բ—Ե-ից և Է-ից։

№ 397
ԿՆՈՒՆՏԱԳԻՐ
(Պարսկերեն)

**Թերթերը՝** 1:—**Մեծությունը՝** 100×33,2 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:—**Կազմը՝** կալվածագրի ամբողջ կռնակը շոր է կպցված:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** միայունն:—**Դատարկ թղթերը՝** 1բ:—**Տողերը՝** 26:—**Գծումները՝** ճնշումով, սակայն տեքստը գրված է համաչափ քաշված զուգահեռ գծերի միջտեղումը:—**Գիրը՝** արաբերեն նասխի տառեր:—**Զարդագրություն՝** չունի:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատու՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1828 թ.:—**Վայրը՝** Նախիջևան:—**Մանոթություն՝** պարսկերեն սույն կալվածագիրը հանված է Մայր Աթոռի կաթողիկոսական Դիվանի արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սույն կալվածագիրը վերաբերում է Նախիջևանում Դարաշամբ գյուղի գնման ակտի մասին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Կալվածագրի ներքևի ձախակողմյան ծայրամասում կա հիջրայի 1244 թվականը (1828 թ.—Ն. Մ.):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կալվածագրի վերևի աջ ծայրամասում կա հետևյալ հայերեն նոտրգիր գրությունը)

Վկայ եմ

Սրբոյ Էջմիածնի քհին միաբան և Սրբազան Առաքելոյն Թատէոսի վանուց և վիճակաց նորա Առաջնորդ և այժմ նորոգ կարգեալ վերատեսուչ համայն հոգևորական գործոցն վերաբնակեալ Ատրպատականի և քնակչութիւնք հայոց, որք ի գաւառսն Նախիջևանու, Ագուլիսայ և Տարալաեազու. և չորից վանօրէիցն Սրբոյ Կարապետու, Սրբոյ Նախավկայի, Աստապատու Կարմիր Վանուց. և Թովմայ Ագուլիսեայ. Բարսեղ Արքեպիսկոպոս Խաչատուրեանս Նեսարացոյ. վաստակաւոր և Բ կատարեցաւ զայս. ի նշանս կայսէր ռուսաց Նիկոլայ Պավլովիչի. զկնի երից ամաց առմն. Նախիջևան յԵրևան ի ձեռաց պարսից ազգին:

(Այստեղ կա խաչաձև 2,6×2,6 սմ. չափերով մի կնիք, որի վրա գրված է)

Ք. Ծ.

Բարսեղ Էջմի. Վարդապետ

1810:

(Աջակողմյան լուսանցքում և վերևում կան պարսիկների օվալաձև և քառանկյուն 34 զանազան փոքրիկ կնիքներ և ստորագրություններ, իսկ ձախակողմյան լուսանցքում և վերևում կան հայերի օվալաձև և քառանկյուն 21 զանազան փոքրիկ կնիքներ և ստորագրություններ, որոնց անունները տրվում են ստորև)

Մելիք Էվազ 'տիվանբէկի.
Մելիք Մարտիրոս Նիջվնցի.
Միքայէլ...
Կարապէտ Բունեաթով վկայէմ.
(Ես Սր. Կարապետու)
Ես Նախչևան քաղաքի Ավաք քհնայ տր. Կարապետ քհնայս ածարնիս. վկմ.
Տվանպակի Մաթէոս Սումաթով.
Սարքիսն Սահակեան վկեմ.
Ես Ծույլացի Մելիք Յարութիւն Մելիք Ստեփանեան վրգեմ.
Մելիք Մարտիրոս Ենկիպարեան Նախջվցի.
Կարապետ Ավաքեան Մայիլով Մահլզցի որ աժմ Նախջվն.
Սրապիոն Պետրոսեն Նախջվնց.
Մելիք Էհվազ Օհանէսեն Նախջվց.
Սուքիաս Բաղտասարեան Ջուղայեցի որ աժմ ի Նախջվան քղաքի.
Մելիք Զօրհապ Մէլիքօվ Թազայ գեղի.
Սարգիս Մկրտիչան Ստայպատցի.
Կարապետ Ալիթեն երեսփոխ Նախջվան.
Պօղոս Աթամօվ Նախչվանցի.
Մելիք Իսկատար Այլապատցի.
Սուքաս Եարում Քեեցի (կնիքը պարսկերեն է).
Մելիք Աւետիկ Քույլեցի.
Ես Սուրբ Նախավկայի Առաջնորդ Սարգիս վարդապետս այս թարղիս որ է 1825 այս ղաբալայիս մուլքն Շամբայ մոհպալի բէկից առիմ ՃԼ թումաև և ծախեցիմ Պրն. Գասպարեանին Նախջվնցոյ իւր ղաբալօվն (կնիք):
(Կալվածագրի կռնակում հետևյալ հայերեն նոտրգիր գրությունը կա)
Ես Պետրոս Գասպարեանս որ Դարաշամբ գուղն գնեալ եմ սոյն ղաբալայիւն ծախեցիմ Սբ. Ըստէփանոս Նախվկյին. Առաջնորդ Սարքիս ած. արարեալ վրդպետին ինչ պս զնեալէիմ որ հայտէ ղաբալայի միջին դրամնս:
1830 սեպտեմբերի 4-ին Նախչևան:
Պետրոս Գասպարեան:
Որովհետև գիր չէր խաբար նորին խնդրանօք ձերք դրի և վկեմ.:
Յօվանէս Մկրտիչեան:
(Այստեղ կա հիշյալ Պետրոսի երեք փոքրիկ կնիքները հետևյալ գրությամբ)

Ք. Ծ.

Պետրոս

1268:

№ 398
ԿՆՈՒՆՏԱԳԻՐ
(Պարսկերեն)

**Թերթերը՝** 1:—**Մեծությունը՝** 83,7×33,2 սմ.:—**Նյութը՝** դեղնած դիմացկուն հաստ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** միայունն:—**Դատարկ թղթեր՝** չունի:—**Տողերը՝** 15:—**Գծումներ՝** չունի:—**Գիրը՝** արաբերեն նասխի տառեր:—**Զարդագրություն՝** չունի:—**Գրիչը՝**

անհայտ։—**Պատվիրատուն՝** անհայտ։—**Ժամանակը՝** 1828 թ.։—**Վայրը՝** անհայտ (շատ հավանաբար Նախիջևան)։—**Ծանոթություն՝** պարսկերեն սույն կալվածագիրը հանված է Մայր Աթոռի կաթողիկոսական Դիվանի արխիվից։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սույն կալվածագիրը վերաբերում է Նախիջևանում գտնվող Դարաշամբի երկու գյուղերի (Դիբքյանտ և Օրտաբյանտ) վաճառման մասին։ Դրանք գնել է Սարգիս խալիֆան (հոգևորական) Ս. Դանիել վանքի համար։

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Կալվածագրի ներքևի ձախակողմյան ծայրամասում կա հիջրայի 1244 թվականը (1828 թ.—Ն. Մ.)։

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կալվածագրի ներքևի ձախակողմյան ծայրամասում կա փաստաթուղթը տվողի փոքր կնիքը, որից երկու հատ էլ կա չորս տող վերևում։ Սրանցից բացի կալվածագրի վերևի մասում և աջակողմյան լուսանցքում կա 27 հոգու փոքր օվալաձև կամ քառանկյուն կնիքները և ստորագրությունները, բոլորն էլ պարսկերեն լեզվով։ Այս պարսիկները զույգ գյուղերի վաճառման և գնման ակտի վկաներն են։

Կալվածագրի ձախակողմյան ավելի նեղ լուսանցքում կա 9 հայ վկաների նույնանման փոքր կնիքները և ստորագրությունները, որոնք տրվում են ստորև.

Տվանցակին Մէլիք Մաթէոս Սուպաթով.
Սարգիս Ապակեայն Նախչվանցի.
Մէլիք Աւետիկ Ճոյլայեցի.
Մէլիք Զօրհապ Մէլիքօվ Թազայ գեղի.
Մելիք Իսկատար Այլայպատցի.
Սուքաս Եարում Քեցի (կնիքը պարսկերեն է).
Պօղոս Աթամօվ Նախչվանցի.
Ես Ջուղայեց(ի) Մելիք Յարութիւն Մէլի(ք) Ստեփանեանս վըգ(ա)յեմ.
Սարգիս Մկրտիչեան Նախչվանցի։

Կալվածագրի կռնակում գրված է հայերեն հետևյալը.

7 թերթ.
Պարսկերէնք.
Կալվածագիր։

### № 399
### ՆԱՄԱԿ
### (Պարսկերեն)

**Թերթերը՝** 1։—**Մեծությունը՝** 43,7×33,6 սմ.։—**Նյութը՝** միջակ դիմացկուն թուղթ։—**Կազմ՝** չունի։—**Պահպանակներ՝** չունի։—**Վիճակը՝** լավ։—**Գրությունը՝** միասյուն։—**Դատարկ թղթեր՝** չունի։—**Տողերը՝** 6։—**Գծումներ՝** չունի։—**Գիրը՝** արաբերեն նասխի տառեր։—**Զարդագրություն՝** չունի։—**Գրիչը՝** անհայտ։—**Պատվիրատուն՝** Ղահրաման Միրզա։—**Ժամանակը՝** 1886 թ.։—**Վայրը՝** անհայտ։—**Ծանոթություն՝** պարսկերեն սույն նամակը հանված է Մայր Աթոռի կաթողիկոսական Դիվանի արխիվից։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սարգիս եպիսկոպոսն ապաստան է գտել Պարսկաստանում, լավ գործեր է կատարել այնտեղ, որի համար արքայական պարգևի է արժանացել, որպես հարգանքի նշան։

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Նամակի վերևի աջակողմյան մասում կա պատվիրատուի ստորագրությունն և քառանկյուն մեծ կնիքը, 2,6×2,3 սմ. չափերով։ Կնիքում կարդացվում է «Ղահրեման» անունը։ Կա նաև այլ բառեր ևս։

Նամակի ներքևի ձախակողմյան անկյունում կա հիջրայի 1304 թվականը (1886 թ.—Ն. Մ.)։

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նամակի կռնակում գրված է հայերեն հետևյալը.

Այս է Ապաս Միրզայի որդի Ղահրաման Միրզի ռաղամն որ ինձ Սարգիս եպս. իս խալաթ էր հղեալ 1838ին մայիս 15ին։

Այստեղ կա նաև քառանկյուն պարսկերեն մի կնիք։

### № 400
### ՆԱՄԱԿ
### (Պարսկերեն)

**Թերթերը՝** 1։—**Մեծությունը՝** 42×29 սմ.։—**Նյութը՝** միջակ դիմացկուն թուղթ։—**Կազմ** չունի՝—**Պահպանակներ՝** չունի։—**Վիճակը՝** բավարար։—**Գրությունը՝** միասյուն։—**Դատարկ թղթեր՝** չունի։—**Տողերը՝** 7։—**Գծումներ՝** չունի։—**Գիրը՝** արաբերեն նասխի տառեր։—**Զարդագրություն՝** չունի։—**Գրիչը՝** անհայտ։—**Պատվիրատուն՝** Մամադ Ռահիմ Միրզա։—**Ժամանակը՝** 1835 թ.։—**Վայրը՝** անհայտ։—**Ծանոթություն՝** պարսկերեն սույն նամակը հանված է Մայր Աթոռի կաթողիկոսական Դիվանի արխիվից։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նամակը վերաբերում է Նախիջևանի Դիբքյանտ և Օրտաբյանտ գյուղերում գնված հողերի մասին։ Ոչ ոք իրավունք չունի ձեռք տալու և նեղացնելու տիրոջը։

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Նամակի վերևի աջակողմյան մասում կա պատվիրատուի ստորագրությունն և քառանկյուն մեծ կնիքը, 2,8×2,6 սմ. չափերով։ Կնիքում կարդացվում է «Մամադ Ռահիմ» անունը։ Կա նաև այլ բառեր ևս։

Նամակի ներքևի ձախակողմյան անկյունում կա հիջրայի 1251 թվականը (1835 թ.—Ն. Մ.)։

(Շարունակելի)